«ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԳԱՆՁԵՐՆ ԱՇԽԱՐՀԻ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐՈՒՄ»

Հրամանավ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Սրբալույս Մյուռոնի օրհնության առիթով լույս է ընծայվել «Սուրբ Էջմիածնի գանձերն աշխարհի թանգարաններում» գունավոր և շքեղ ձևավորմամբ ալբոմը աշխատասիրությամբ Տ. Ասողիկ քահանա Կարապետյանի:

Եռալեզու՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն այս աշխատանքը տպագրվել է «Տիգրան Մեծ» հրատարակչատանը մեկենասությամբ տեր և տիկին Վրեժ և Անահիտ Մարկոսյանների:

Գիրքը բացվում է Վեհափառ Հայրապետի Օրհնության խոսքով, որում ի մասնավորի ասվում է. «*Հոգու ուրախությամբ ենք ողջունում «Սուրբ Էջմիածնի գանձերն աշխարհի թանգարաններում» ալբոմի հրատարակումը, որտեղ ներկայացվում են մեր հոգևոր արժեքները, որոնք դարերի մեջ ստեղծված, պահպանված ու մեզ ավանդված սրբություններ են:*

Նվիրական այդ գանձերի մեջ արտահայտված են մեր ժողովրդի հոգևոր կյանքը, ձգտումներն ու իղձերը և աղոթքն առ Աստված, որով ստեղծվել են ու կերտվել որպես արվեստի գործեր: Միաժամանակ այդ արժեքները ներկայացնում են մեր ժողովրդի պատմության էջերը, մեր հնագույն վանքերն ու մշակույթի կենտրոնները Հայրենիքում և տարբեր գաղթօջախներում: Դրանցից շատերը փրկվել են աղետներից ու ավերածություններից, պահպանվել ու մեզ հասել զրկանքներով ու անձնազոհությամբ, հավատքով մեր ժողովրդի, որ այսօր ապրում ու արարում է և նոր կյանք կառուցում նույն հավատքով, առ Տերն մեր Հիսուս Քրիստոս նույն ապավինությամբ:

Դարակազմիկ հոբելյանի՝ Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակի առիթով, որը մեր ժողովուրդը տոնախմբեց 2001 թ., Սուրբ Էջմիածնի գանձերը ցուցադրվեցին աշխարհի բազմաթիվ նշանավոր քաղաքներում և հանրահայտ թանգարաններում՝ ճանաչելի դարձնելով հոգևոր մեր ժառանգությունը բազմազգ հազարավոր այցելուների: Միմյանց մշակույթին առնչվելն այն բարեբեր ուղիներից է, որոնցով արգասավորվում են ժողովուրդների բարեկամությունը և ամրապնդվում են համագործակցության ուղիները: Աստվածահաճո այդ առաքելությունը շարունակվում է «Սուրբ Էջմիածնի գանձերն աշխարհի թանգարաններում» պատկերազարդ այս գրքի հրատարակումով»:

Գրքում ներկայացվում են Ս. Էջմիածնում պահվող այն սրբությունները, որոնք 1995-2007 թթ. ցուցադրվել են աշխարհի տարբեր թանգարաններում: